Ի ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ ԿՈՍՈՎՈՅԻ, ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ՄՆՈՒՄ Է ԼՈՒԾԵԼ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԱՐՑԸ

Կոսովոյի հակամարտութեան կարգաւորման հարցում Հայաստանը կողմ է խաղաղ բանակցութիւնների միջոցով լուծումներ գտնելուն: «Ոչ միայն Ղարաբաղի, այլեւ առհասարակ բոլոր հակամարտութիւնների հարցում մենք դէմ ենք ռազմական ուժի օգտագործման նախադէպ հաստատելուն եւ ռազմական միջոցով որեւէ մէկին ինչ-որ լուծում պարտադրելուն»,- Մարտի 22ի իր ասուլիսում ասաց Հ.Հ. Ա.Գ. նախարար Վարդան Օսկանեանը:

Զուգահեռներ անցկացնելով Ղարաբաղեան եւ Կոսովոյի հակամարտութիւնների միջեւ, նա նշեց, որ դրանցում իրավիճակները խստօրէ տարբերւում են: Կոսովոյի դէպքում խօսքը գնում է ժամանակատար լուծման՝ արիւնահեղութիւնը դադարեցնելու մասին, իսկ կարգավիճակի խնդիրը յետաձգւում է երեք տարով: Այսօր սեղանի վրայ եղած պայմանագրում նշւում է, որ կարգավիճակի հարցը կը քննարկուի երեք տարի յետոյ, երբ բանակցութիւնները վերսկսուեն

Կոսովոյի կարգավիճակի մասին, պէտք է անպայմանօրէն հաշուի առնուի Կոսովոյի ժողովրդի կամքը: «Ես կարծում եմ, որ սա մեզ համար դրական երեւոյթ է. փաստօրէն, միջազգային հանրութիւնը համաձայնում է ժողովրդի կամքը հաշուի առնելու սկզբունքի հետ. դա ինքնորոշման լաւագոյն դրսեւորումն է»,- ասաց Ա.Գ. նախարարը:

Վ.Օսկանեանը նշեց, որ Ղարաբաղի դէպքում միջանկեալ որոշումներ որոնելու կարիք չկայ, քանի որ այստեղ գինադադար է, եւ իրողութիւն է, որ Ղարաբաղի ժողովուրդն արդէն ինքնորոշուել է: «Մնում է, որ միանգամից անցնենք կարգավիճակի քննարկմանը»,- ասաց Վ. Օսկանեանը:

«Արմենպրես»